ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱԼԲԵՐՏ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ և ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ալբերտ Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց հ. 13 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԼԲԵՐՏ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ և ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ալբերտ Մնացականյանը ծնվել է 1930թ. Երևանում: 1947թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը: 1956թ. ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի տեխնիկումը: 1956-1996թթ. աշխատել է «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությունում՝ որպես հունահռոմեական ըմբշամարտի մարզիչ:

Ալբերտ Մնացականյանը մասնակցել է հանրապետական, ԽՍՀՄ և միջազգային բազմաթիվ մրցումների, Հայաստանի Հանրապետության բազմակի չեմպիոն է, ԽՍՀՄ առաջնության մրցանակակիր: Եղել է ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ, աշխատել ԽՍՀՄ հավաքականի մարզչական խորհրդում:

Ալբերտ Մնացականյանին 1953թ. շնորհվել է ԽՍՀՄ սպորտի վարպետի, 1966թ.՝ ՀՀ վաստակավոր մարզչի, 1982թ.՝ ԽՍՀՄ վաստակավոր մարզչի կոչումներ, 1985թ. պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

Ալբերտ Մնացականյանը մահացել է 1996թ. Երևանում:

1997թ. սկսած ամեն տարի «Դինամո» ՄՀԿ մարզադահլիճում անց է կացվում հուշամրցաշար՝ նվիրված ՀՀ և ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ալբերտ Մնացականյանի հիշատակին:

ՀՀ և ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Ալբերտ Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Աբովյան փողոց հ. 13 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հ. Ռոստոմյանի, Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ Ա. Սամսոնյանի և ՀՀ քաղաքացի Ա. Մնացականյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԼԲԵՐՏ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ալբերտ Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԼԲԵՐՏ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ալբերտ Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ